

Սիրելի Ծխականներ,

Պահանջակալ սրտով կը տեղեկագրեմ թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ Սուրբ Յարութիւն Եկեղեցիի անդամներուն եւ Համայնքիս ազնիւ ժողովուրդին նիւթական ու բարոյական օգնութեան շնորհիւ ունեցած ենք յաջող տարի մը:

Առաջնորդուելով Թեմիս Եկեղեցական Կանոնադրութենէն, ստորեւ կը ներկայացնեմ իմ մէկ տարուան գործունէութիւնը ըստ հետեւեալին:

1. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ:

Պէտք է գիտնանք որ իբրեւ կրօնական Համայնք, եկեղեցական պաշտամունքները կեդրոնը կը կազմեն մեր ծխական կեանքին: Տարուան իւրաքանչիւր Կիրակի օրը ժամը 9.30 էն 10.00 կատարած ^W առաւօտեան ժամերգութիւն, որուն ներկայ եղած են միայն 2 հոգի: Տարուան բոլոր Կիրակիներուն ժամը 10.00 ին մատուցած ենք Ս Պատարագ: Ի շինութիւն մեր ծխականներուն, ամսուան երկրորդ Կիրակին քարոզները խօսած ենք Անգլերէնով: Իսկ մասնաւոր արարողութիւններ կատարած եմ ըստ տօնին եւ առիթին:

2. ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՔ:

Յունուար 1 էն Դեկտեմբեր 31 մկրտած եմ եմ ³ նորածիններ, 2 պարմանուհիներ, եւ դրոշմած չափահաս այր մարդ մը: Ունեցած ենք 4 մահեր:

Յ. ԱՅՑԵԼ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Այցելած եմ մեր ծխականներուն զանազան առիթներով, երբեմն իբրեւ հովուական պարտականութիւն, երբեմն ուրախ առիթներով, եւ երբեմն ալ մահուան տխուր առիթով: Հիւանդութեան պարագային այցելած եմ տունը կամ հիւանդանոցը:

4. ՏՆՕՐ ՀՆԷՔ:

Հովիւին եւ Ծխական Խորհուրդին կողմէ պատրաստուած ցանկի մը հետեւելով Ջատկուան տօնին առթիւ օրհնած եմ 37 տուն: Պէտք է մատնանշեմ թէ կարգ մը ծխականներ խուսափած են իրենց տունները օրհնել տալէ: Հոս կուզեմ յիշել որ Պր. Հէրրի Ազարիկեան, սիրով եւ եռանդով ինծի ընկերացած է տնօրհնէք կատարած օրերուս եւ մատուցած գովելի ծառայութիւն: Հովիւն ու Ծխական Խորհուրդը կը գնահատեն իր այս ազնիւ արարքը:

5. ԳԵՐԵԶՄԱՆ ՕՐՀՆԵՔ - Մէմօրիըլ Տէյիւն առթիւ օրհնած եմ մեր ծխականներուն
----- գերեզմանները:

6. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՐԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թեմիս Կանոնադրութեան համաձայն Հովիւը ի պաշտօնէ նախագահն է Ծուխին,
Տարեկան Ծխական ժողովին եւ եկեղեցական կազմակերպութիւններուն, այսինքն,
Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան, էյ, Սի, Ուայ, Օյ, էյ, ի, Դպրաց Դասի
եւ Ամոսնացեալ Ձոյգերու Ղնկերակցութեան: Յիշեալ մարմիններու ժողովներու
րուէն ներկայ գտնուելով տուած եմ հարկ եղած ցուցմունքն ու ուղղութիւնը:

7. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ:

Մօտէն հսկած եմ անոր բարւօք գործառնութեան:

8. ՀԱՅ ԴՊՐՈՑ:

Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի ծրագրին համաձայն Ծուխի մը Հայ
Դպրոցը պէտք է ունենայ Խնամակալութիւն մը, վերին հսկողութեամբ Հովիւին,
տեղական պայմանները նկատի առնելով մենք Խնամակալութիւն չունինք,
Հովիւը կը դասախօսէ եւ կը հսկէ իբրեւ պատասխանատու անձնաւորութիւն:

9. ԶԱՆԱԶԱՆՔ: Վերոյիշեալներու կարգին կատարած եմ հետեւեալները:

Փետրուար 11 ին, Նիւ-Պրիթլընի Բանձրընս ավ Զըրչի սարքած ճաշկերոյթին
մասնակցած եմ եկեղեցւոյս ներկայացուցիչներուն հետ:

Մարտ 10 ին, Հարտօնըտի Ս Գէորգ Եկեղեցիին մէջ Տիկնանց Միութեան
անդամներուն հետ մասնակցեցանք Հայ Սրբուհիներու նուիրուած պաշտամանց:

Ապրիլ 10 ին, Ծխական Խորհուրդի ատենապետին հետ դիմաւորեցինք Առաջնորդ
Սրբազան Հայրը, որ նոյն երեկոյ, ընթրիքէն վերջ ժողով մը ունեցաւ
եկեղեցական կազմակերպութիւններուն հետ: Սրբազանը Մաղկազարդի Կիրակին
պատարագեց, քարոզեց եւ նախագահեց եկեղեցիի օծման տարեդարձի հանդիսութեանց:

Ապրիլ 28 ին եւ 29 ին մասնակցեցայ Եկեղեցականներու Համագումարին, իսկ
Ապրիլ 30 էն Մայիս 2, մեր երեսփոխականներուն հետ մասնակցեցայ Թեմական
Պատգամաւորական ժողովին, ի նիւտէլ նիստ:

Եզրափակելով խօսքս,

հաճոյքով կ, ըսեմ թէ Ձեր նուիրումին եւ զոհողութեան շնորհիւ, շէն
ու պայծառ է Ս Յարութիւն Եկեղեցին: Կը յուսամ որ երբ մօտ ատենէն ձեզի
դիմենք կառուցուելիք նոր եկեղեցիին համար, պիտի ըլլաք առատաձեռն ու
պատրաստ օգնելու ամէն կերպով:

Շնորհակալութիւն բոլորիդ, որ ներկայ եղաք այս ժողովին եւ բերիք
ձեր շինիչ մասնակցութիւնը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ մեզի պարգեւէ շնորհք ու
երկնային իմաստութիւն, ծառայելու իր փառքին ու Հայ ժողովուրդին, Ամէն:

Yeghigheh Hovhannessian
Վարդան Բհնյ. Տ Ասատուրեան
Հոգեւոր Հովիւ